ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆԿՈՒՄԸ ԵՎ ՆՐԱ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՀԱՐՑՆ ԸՍՏ ԵՐԵՎԱՆԻ ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ

Արա Ազատյան

Մուտք

1920 թ. ապրիլի 28-ին Ադրբեջանը գրեթե առանց կրակոցի խորհրդայնացվեց, որը մեծ ոգևորություն առաջացրեց հայ բոլշևիկների շրջանում, ովքեր ձեռնամուխ եղան մայիսյան ապստամբության կազմակերպմանը: Նրանց նպատակն էր տապալել իշխանությունը և Հայաստանում նույնպես հաստատել խորհրդային կարգեր: Սակայն 1920 թ. մայիսին հայ բոլշևիկների նախատեսած պլանով Հայաստանի խորհրդայնացումը չիրականացվեց, փոխարենը խորհրդա-քեմալական համատեղ ուժերով խորհրդայնացվեց Լեռնային Ղարաբաղը:

Ադրբեջանի խորհրդայնացումից անմիջապես հետո Խորհրդային Ադրբեջանի, ինչպես նաև կարմիր բանակի հրամանատարության կողմից Հայաստանի Հանրապետության կառավարությանը ներկայացվեցին վերջնագրեր, որոնցով պահանջվում էին Ղարաբաղն ու Զանգեզուրը[1]: Վերջնագրային բնույթի սպառնալիքներից հետո Խորհրդային Ադրբեջանի ղեկավարությունը կարմիր բանակի հրամանատարության հետ անցնում է գործնական քայլերի: Հանուն ճշմարտության հարկ է նշել, որ չկար որևէ տարբերություն խորհրդային և մուսավաթական Ադրբեջանի ղեկավարների միջև, քանզի նրանց նպատակը վիճելի համարվող տարածքներն Ադրբեջանի կազմում ընդգրկելն էր:

Ուստի, խորհրդա-քեմալական համագործակցության արդյունքում Ղարաբաղում հաստատվում են խորհրդային կարգեր, սակայն արցախահայության այն հույսերը, թե խորհրդային կարգերի հաստատումը կնպաստեր մայր հայրենիքի հետ նրա վերամիավորմանը՝ շուտով հօդս են ցնդում: Ինչ վերաբերում է Հայաստանի Հանրապետության խորհրդայնացմանը, ապա այդ հարցը ժամանակավորապես մտնում է փակուղի,

---

[1] Տե՛ս “Բանւորի ձայն», 1920, 9 մայիսի, Нагорный Карабах в 1918-1923 гг., сборник документов и материалов, Ереван, 1992, с. 445:

մանավանդ, որ այդ օրերին Մոսկվա էր մեկնել Լ. Շանթի գլխավորած հայկական պատվիրակությունը: Սա նշանակում էր, որ Հայաստանի խորհրդայնացման հարցը ժամանակավորապես սառեցվում էր և մտնում բանակցային փուլ: Սակայն այս հարցը խորհրդային կառավարությունն օրակարգ չմտցրեց նաև հունիս-հուլիս ամիսներին ընթացող հայ-ռուսական բանակցությունների ժամանակ: Այս ընթացքում Հայաստանի խորհրդայնացման հարցն ավելի շատ դիտվում էր որպես միջանկյալ խնդիր: Խորհրդային Ռուսաստանի առաջնային նպատակն իրեն հակաիմպերիալիստական և հեղափոխական ուժ հայտարարած քեմալական Թուրքիայի հետ ցամաքային կապի հաստատումն էր, ինչպես նաև հեղափոխության արտահանումով Թուրքիայում և ամբողջ մուսուլմանական Արևելքում խորհրդային իշխանության հաստատման ցնորամիտ ծրագրի իրականացումը[1]: Խորհրդային Ռուսաստանին ի սկզբանե հետաքրքրող հարցը Հայաստանի վրայով տարանցիկ ուղու ապահովումն էր: Ահա հենց այս պատճառով 1920 թ. ամռանն ու աշնանը Խորհրդային Ռուսաստանը ցանկանում էր Թուրքիայի և Հայաստանի միջև միջնորդի դեր ստանձնել ու ապահովել Հայաստանի վրայով տարանցիկ ցամաքային կապը Ռուսաստանի և Թուրքիայի միջև, որի ամենակարճ ու հարմար միջանցքը Նախիջևանն էր[2]:

Հայաստանի խորհրդայնացման նախօրյակին տեղի ունեցած իրադարձությունները

Անշուշտ, Հայաստանի խորհրդայնացման խնդիրն ուղղակիորեն կապված էր թուրք-հայկական պատերազմի հետ: Խորհրդային Ռուսաստանի նպատակն էր քեմալականների հարձակման սպառնալիքով ստիպել Հայաստանին, որպեսզի վերջինս խաղաղ ճանապարհով խորհրդայնանա: Հուլիս-օգոստոս ամիսներին Մոսկվայում ընթացած խորհրդա-քեմալական բանակցությունների արդյունքում օգոստոսի 24-ին կողմերի միջև ստորագրվեց բարեկամության նախնական համաձայնագիր, որով կողմերը պարտավորվում էին “փոխադարձ համաձայնությամբ և կարճ ժամանակում ձեռնարկել անհրաժեշտ բոլոր միջոցները՝ Ռուսաստանի և

---

[1] Տե՛ս **Հակոբյան Ա.**, Հայաստանի խորհրդայնացման հարցի շուրջ (1920 թ.) // «Դրոշակ», 2001, մարտ, թիւ 2, էջ 137:

[2] Տե՛ս նույն տեղում, էջ 139:

Թուրքիայի միջև հաղորդակցության ճանապարհները բացելու համար»[1]: Ռուս-թուրքական այս մերձեցումը հուսադրեց քեմալականներին, որոնք սեպտեմբերի վերջին պատերազմ սկսեցին Հայաստանի դեմ:

Քեմալա-բոլշևիկյան այդ մերձեցումն առավել ամրապնդվել էր 1920 թ. սեպտեմբերի 1-ից 8-ը Բաքվում կայացած Արևելքի ժողովուրդների առաջին համագումարում, որտեղ Հայաստանն անվանվեց "միջազգային իմպերիալիզմի դաշնակից պետություն»: Այդ համագումարի բուն նպատակն էր համոզել «Արևելքի ճնշված և հարստահարված ժողովուրդներին», որ իրենց երջանկության խաթարողը «իմպերիալիզմի դաշնակից Հայաստանն է»[2]: Սեպտեմբերի 17-ին դարձյալ Բաքվում մշակվեց Հայաստանի վրա հարձակման և խորհրդայնացման ծրագիր, որում գլխավոր դերը վերապահված էր քեմալական Թուրքիային: Սեպտեմբերի 20-ին Հայաստանի կոմկուսի կենտկոմն ընդունում է հայ բոլշևիկներին ուղղված հույժ գաղտնի որոշում, ըստ որի՝ սկսվող թուրք-հայկական պատերազմում հարկավոր էր ամեն գնով կազմալուծել հայկական բանակը, արագացնել Հայաստանի պարտությունը, որը կխթաներ խորհրդայնացման գործընթացը[3]: Փաստորեն, խնդիր դրվեց Հայաստանի խորհրդայնացումը կատարել թուրքական մահաբեր ներխուժման միջոցով, ինչն իրեն ուշացնել չտվեց: Սեպտեմբերի 17-ին, «Արևելքի ժողովուրդների քարոզչության և գործողությունների խորհրդի» կողմից Բաքվում մշակված ծրագրից մի քանի օր անց, քեմալականներն սկսեցին ռազմական գործողություններ Հայաստանի դեմ, որը հանգեցրեց հայոց անկախ պետականության կործանմանը:

Հարկ է նշել, որ թուրք-հայկական պատերազմի ընթացքում Հայաստանի խորհրդայնացման խնդիրն օրակարգ մտցվեց միայն հոկտեմբերի 14-ին, երբ ՌԿ(բ)Կ Կենտկոմի Քաղբյուրոն ընդունեց Չիչերինի առաջար-

---

1 **Խաչատրյան Կ.**, Հայ-ռուսական հարաբերությունները 1920-1922 թթ., Երևան, 2007, էջ 27:

2 **Սարդարյան Կ.**, Համաշխարհային հեղափոխության արևելյան խաչմերուկում // "Գարուն», 1990, թիվ 4, էջ 18:

3 Տե՛ս **Ազատյան Ա.**, Հայաստանի խորհրդայնացման օրվա հարցը հայ պատմագրության մեջ // "Հայագիտության հարցեր», 2021, թիվ 2, էջ 199:

կությունը Հայաստանի խորհրդայնացման վերաբերյալ[1]: Ըստ այդ որոշման՝ Հայաստանը պետք է խորհրդայնացվեր և կասեցվեր թուրքերի հետագա առաջխաղացումը, սակայն այդ որոշումն իրագործվեց ավելի ուշ:

Բոլշևիկների հաշվարկն այս հարցում հետևյալն էր. թուրքերի՝ Հայաստանի վրա հարձակվելու պարագայում հայոց բանակը գոնե մի քանի ամիս դիմադրություն ցույց կտար, և երբ սկսվեր նահանջն ու թուրքերի կողմից հայկական տարածքների գրավումը, ապա այդ դեպքում Հայաստանի կառավարությունը ստիպված կդիմեր Ռուսաստանին՝ երկիրը կամավոր խորհրդայնացնելու նպատակով[2]: Ցավոք, հայոց բանակը չկարողացավ երկարատև դիմադրություն ցույց տալ, իսկ Բ. Լեգրանի պատվիրակությունը Հայաստան եկավ Կարսի ճակատում հայկական կողմի ունեցած անհաջողությունների ժամանակ՝ հասնելով Երևան միայն հոկտեմբերի 12-ին[3]: Հաջորդ օրը վերսկսվեցին բանակցությունները Բ. Լեգրանի և Լ. Շանթի պատվիրակությունների միջև, որի արդյունքում հոկտեմբերի 28-ին կողմերը ստորագրեցին «Եզրափակիչ որոշման արձանագրություն» և դրան կից “Հաշտության պայմանագրի նախագիծ» փաստաթղթերը, որոնք քննարկվում են Ադրբեջանի կոմկուսի կենտկոմի քաղբյուրոյի և ՌԿ(բ)Կ կենտկոմի կովկասյան բյուրոյի՝ նոյեմբերի 4-ին Բաքվում հրավիրված համատեղ նիստում, սակայն հավանության չեն արժանանում և մերժվում են: Փաստաթղթերի մերժումը հարկ է համարել բնական, քանզի դրանք հակասում էին հոկտեմբերի 14-ի քաղբյուրոյի ընդունած որոշմանը: Այդ պայմանագրի նախագծում հստակորեն չէր դրվում Հայաստանի խորհրդայնացման հարցը:

Արդեն նոյեմբեր ամսին Հայաստանի բռնի խորհրդայնացման և քեմալականների առաջխաղացումը կասեցնելու հարցերը դրվում են Խորհրդային Ռուսաստանի օրակարգում: Նոյեմբերի 11-ին Խորհրդային Ռուսաստանը պատրաստակամություն է հայտնում միջնորդի դեր կատարել Հայաստանի և Թուրքիայի միջև: Այդ նպատակով Լեգրանը և

---

[1] Տե՛ս Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923), պրոֆ. Ջ. Կիրակոսյանի խմբագրությամբ, Երևան, 1972, էջ 456:

[2] Տե՛ս **Սիմոնյան Ա.**, Զանգեզուրի գոյամարտը 1920-1921 թթ., Երևան, 2000, էջ 219:

[3] Տե՛ս Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. 200, ց. 1, գ. 427, թ. 391:

Մդիվանին նոյեմբերի 19-ին ժամանում են Երևան[1]: Ըստ նախորդ օրն Ալեքսանդրապոլում ստորագրված թուրք-հայկական զինադադարի՝ ռազմական գործողությունները դադարում են և զինադադարի վերջնական ժամկետ է նշվում նոյեմբերի 25-ի երեկոյան ժամը 6:45 րոպեն, ուստի հարկ էր, որ նոյեմբերի 24-ի երեկոյան Ալեքսանդրապոլում սկսվեին թուրք-հայկական հաշտության բանակցությունները[2]:

Հայաստանի Հանրապետության ներքաղաքական իրավիճակը նոյեմբերի վերջերին

1920 թ. նոյեմբերյան այդ օրերին Հայաստանի Հանրապետության ներքաղաքական կյանքում տեղի ունեցան որոշ փոփոխություններ: Նոյեմբերի 20-ին խորհրդարանի դաշնակցության ֆրակցիայի նիստում վարչապետ Հ. Օհանջանյանը հայտնում է հրաժարական տալու իր որոշումը և խնդրում մտածել նոր վարչապետի մասին: Այս առիթով Ալ. Խատիսյանը գրում է. "Խորհրդարանի անդամներու տրամադրութիւնը համանման էր վարչապետի կարծիքին, որովհետեւ կը թուէր, թէ Թուրքիոյ հետ խաղաղութեան բանակցություններ վարելու համար պէտք է ո՛չ այն կառավարութիւնը, որ պատերազմ մղած էր անոր դէմ»[3]:

Հ. Օհանջանյանի հրաժարականին հաջորդում է դաշնակցության ֆրակցիայի և խորհրդարանի նախագահության հանձնարարականը Հ. Քաջազնունուն՝ կազմել "չափաւոր հոսանքներից կոալիցիոն կառավարութիւն»[4]: Վերջինս ցանկանում էր կազմել բոլոր կուսակցությունների ներկայացուցիչներից բաղկացած կոալիցիոն կառավարություն, սակայն ընդդիմադիր կուսակցությունները չցանկացան կառավարության մաս կազմել և "խառն կառավարութիւն մը կազմելու Քաջազնունիի ճիգերը ձախողեցան»[5]: Նման պայմաններում Քաջազնունին ներկայացրեց իր

---

[1] Տե՛ս Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ.: (Քաղաքական պատմություն): Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, կազմ.՝ Գ. Գալոյան և ուրիշ., Երևան, 2000, էջ 361:

[2] **Տե՛ս ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 247, թ. 1:**

[3] **Խատիսեան Ալ.**, Հայաստանի Հանրապետութեան ծագումը եւ զարգացումը, Պէյրութ, 1968, էջ 293:

[4] **Վրացեան Ս.**, Հայաստանի Հանրապետութիւն // "Հայրենիք», 1922, թիվ 2, էջ 50:

[5] **Հովհաննիսեան Ռ.**, Հայ Յեղափոխական Դաշնակցութեան դերը Հայաստանի Հանրապետութեան մէջ // «Ասպարէզ», 1992, 28/29 մայիսի, էջ 10:

հրաժարականը խորհրդարանի նախագահությանն ու դաշնակցության ֆրակցիային և վարչապետության թեկնածու առաջարկեց գյուղատնտեսության և պետական գույքի նախարար Ս. Վրացյանին[1]: Քաջազնունու հրաժարականի հետ կապված Հ. Իրազեկը գրում է. "Հիմա, որ մօտենում էր կարմիր բանակը, ուրեմն ըստ այնմ էլ համապատասխան գոյն պիտի ունենային և՛ նոր վարչապետը և՛ նոր կառավարութիւնը: Նոր կառավարութեան գլուխը հիմա պիտի լինէր և՛ շեշտուած ռուսասէր և՛ սոցիալիստ, որովհետեւ չէ որ եկող բոլշեւիկները ռուս էին և ձախերի ձախը, կարմիր: Իսկ Քաջազնունին այդ մարդը չէր»[2]:

Նոյեմբերի 23-ի խորհրդարանի արտահերթ նիստում խորհրդարանի նախագահ Հ. Քաջազնունին ընթերցում է վարչապետ Հ. Օհանջանյանի և նրա կառավարության ներկայացրած հրաժարականը[3]: Միաժամանակ այս նիստում զեկուցմամբ հանդես են գալիս նաև Հ. Օհանջանյանը, մի քանի պատգամավորներ, որից հետո խորհրդարանն ընդունում է կառավարության հրաժարականը և անցնում նոր վարչապետի ընտրությանը: Նույն նիստում խորհրդարանը 34 ձայնով նորընտիր վարչապետ է ընտրում Ս. Վրացյանին և հանձնարարում նրան կազմել կառավարություն[4]: Հաջորդ օրը երեկոյան խորհրդարանի կայացած նիստում հաստատվում է Ս. Վրացյանի ներկայացրած կառավարության կազմը, որի մաս էին կազմում նաև սոցիալիստ հեղափոխականները:

Կառավարություն կազմելուց անմիջապես հետո Ս. Վրացյանը սկսում է բանակցությունները Բ. Լեգրանի հետ, որոնք սակայն որևէ դրական արդյունքի չեն հանգեցնում, քանի որ Հայաստանի խորհրդայնացման խնդիրը հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին արդեն իսկ վճռվել էր Մոսկվայում և Բաքվում[5]:

Կարմիր բանակի զորամասերի մուտքն Իջևան

Այս նույն ժամանակ, երբ Հայաստանում նոր կառավարություն էր ձևավորվում, նոյեմբերի 25-ին մի խումբ բոլշևիկների հետ Բաքվից Ղա-

---

[1] Տե՛ս **Վրացյան Ս.**, Հայաստանի Հանրապետություն, Երևան, 1993, էջ 518:

[2] **Իրազեկ Յ.**, Մօտիկ անցեալից. պատմական դեպքեր և ապրումներ 1917-1922, Պէյրութ, 1956, էջ 85:

[3] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 198, ց. 1, գ. 75, թ. 1-2, «Յառաջ», 1920, 25 նոյեմբերի:

[4] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 198, ց. 1, գ. 75, թ. 3-4:

[5] Տե՛ս Հայաստանի Հանրապետություն 1918-1920 թթ., էջ 303, 323, 328-330:

զախ են մեկնում ՀԿԿ Արտասահմանյան բյուրոն և Հայհեղկոմի անդամները: Հասնելով Ղազախ նրանք Հայաստանի խորհրդայնացման ուղղությամբ նախապատրաստական աշխատանքներ են սկսում: Հայհեղկոմի տրամադրության տակ են դրվում 20-րդ դիվիզիայի 178-րդ, 179-րդ և 180-րդ հետևակային գնդերը: Այդ զորամասերը կոչվեցին «Երևանյան խումբ», որի հրամանատարն էր Մ. Վելիկանովը, իսկ տեղակալը՝ Պ. Կուռիշկոն[1]: Հեղկոմը պետք է Հայաստան մտներ նոյեմբերի 28-ի գիշերը: Ռազմաքաղաքական բոլոր աշխատանքներն ավարտելուց հետո, զորքերի գլուխ անցած, նոյեմբերի 29-ի վաղ առավոտյան այն անցնում է Հայաստանի սահմանը, ցերեկը ժամը 2-ին մտնում Իջևան և "Հայաստանի ապստամբ աշխատավոր ժողովրդի կամքով և ցանկությամբ» Հայաստանը հայտարարում Խորհրդային սոցիալիստական հանրապետություն[2]:

Թեև Կարմիր բանակի զորամասերը Հայհեղկոմի գլխավորությամբ Իջևան մտան առանց որևէ կրակոցի, ընդհարման, բայց նույն օրը Իջևանում ձերբակալվեցին հայկական զորամասի բոլոր սպաները, քաղաքացիական վարչության անդամները և կապիտան Խաչատրյանը[3]: Այս առիթով վարչապետ Ս. Վրացյանը բողոքել է Բ. Լեգրանին և պահանջել դուրս հանել ռուսական զորքերը Հայաստանի տարածքից[4]: Պարզվում է, որ Խորհրդային Ռուսաստանի ներկայացուցիչ Բ. Լեգրանը տեղյակ չի եղել նոյեմբերի 29-ին կատարված իրադարձությանը, ուստի դա համարել է "թյուրիմացություն»[5]: Բայց շուտով նա Ս. Օրջոնիկիձեից տեղեկանում է, որ ամենևին էլ թյուրիմացություն չէ Կարմիր բանակի զորամասերի մուտքն Իջևան: Վերջինս Բ. Լեգրանին հայտնում է, որ Հայաստանը խորհրդայնացնելու վերաբերյալ կա որոշում, ուստի նրան հանձնարա-

---

[1] Տե՛ս **Ալիխանյան Ս.**, Գ. Կ. Օրջոնիկիձեն և Սովետական կարգերի հաստատումը Հայաստանում, Երևան, 1974, էջ 41:

[2] Տե՛ս Հոկտեմբերյան Սոցիալիստական մեծ ռևոլյուցիան և Սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում (փաստաթղթերի և նյութերի ժողովածու), Երևան, 1960, էջ 403:

[3] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, g. 1, գ. 529, թ. 168:

[4] Տե՛ս **Վրացեան Ս.**, Կեանքի ուղիներով. դեպքեր, դեմքեր, ապրումներ, հ. Ե, Պէյրութ, 1966, էջ 191:

[5] **Վրացեան Ս.**, Յուշեր մօտիկ անցեալից // "Հայրենիք», 1923, թիւ 1, էջ 69, **Արմէն Սեւան**, Փետրուար 18-իյեղափոխութիւնը // "Վէմ», 1936, ԺԳ, հունուար-փետրուար,էջ 90:

րում է դիմել Ս. Վրացյանին և պահանջել նրանից իշխանությունը հանձնելու վերաբերյալ պատասխան[1]:

Նոյեմբերի 29-ին Բ. Լեգրանը այս ամենի մասին վերջնագրով տեղեկացնում է Հայաստանի կառավարությանը, իսկ հաջորդ օրը Հայաստանի խորհրդայնացման գրավոր պահանջ ներկայացնում: Նա միաժամանակ հայտնում է Վրացյանին, որպեսզի նա խորհրդային դիրքորոշում ունեցող դաշնակցականներին առաջարկի միանան իրենց և միասին արարեն Հայաստանի իշխանությունը, իսկ Դրոյին առաջարկի ընդգրկվել Հայհեղկոմի կազմում[2]:

Ս. Վրացյանն իրավացիորեն նշում է, որ Հայաստանը հայտնվել էր երկու կրակի մեջ՝ մի կողմից թուրքերն էին սպառնալիքով և վերջնագրերով խոսում, իսկ մյուս կողմից՝ հայ և ռուս բոլշևիկները: Նման պայմաններում Հայաստանի խորհրդայնացումը դառնում էր անխուսափելի[3]: Ստեղծված իրավիճակը Հ. Տերտերյանը բնութագրում է հետևյալ կերպ. «Այլեւս խօսք լինել չէր կարող Հայաստանի անկախ գոյութեան մասին: Պէտք էր ընտրել երկուսից մէկը՝ կամ թրքական եւ կամ ռուսական տիրապետութիւն»[4]:

Նոյեմբերի 30-ի լույս դեկտեմբերի 1-ի գիշերը կառավարության շենքում՝ տեղի ունեցած խորհրդակցությունը

Նոյեմբերի 30-ի լույս դեկտեմբերի 1-ի գիշերը, ԱԳՆ առանձնասենյակում, տեղի ունեցավ ՀՅԴ Բյուրոյի, Հայաստանի Կենտրոնական կոմիտեի, խորհրդարանական հատվածի, կառավարության անդամների և մի շարք այլ պատասխանատուների համագումար նիստ, որտեղ քննարկվում է Հայաստանի խորհրդայնացման վերջնագիրը: Նիստի սկզբում ընդհանուր տրամադրությունն անհաշտ էր: Մեկը մյուսի հետևից ելույթ են ունենում Հ. Օհանջանյանը, Ս. Արարատյանը, Ա. Հովհաննիսյանը, Ա. Չիլինգարյանը, Վ. Նավասարդյանը, ովքեր չէին ընդունում Բ. Լեգրանի պահանջը և առաջարկում էին երկիրը բոլշևիկյան նվաճումնե-

---

[1] Տե՛ս Հայոց պատմություն, հ. 4, գիրք առաջին, Երևան, 2010, էջ 272:

[2] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 529, թ. 171:

[3] Տե՛ս **Վրացեան Ս.**,Հայաստանը բոլշեւիկեան մուրճի եվ թուրքական սալի միջեվ, Պէյրութ, 1953, էջ 126-127:

[4] **Տերտերեան Հ.**, Հայաստանի Հանրապետութեան և Խորհրդային Ռուսաստանի բանակցութիւնները. Լ. Շանթի պատուիրակութիւնը // “Հայրենիք», 1954, թիվ 5,մայիս, էջ 10:

ից պաշտպանելու համար անմիջապես զենքի դիմել: Անգամ լինում են ծայրահեղ մոտեցումներ: Օրինակ՝ Ա. Հովհաննիսյանն առաջարկում էր ձերբակալել Բ. Լեգրանին և բոլոր բոլշևիկներին[1], "զինու զօրութեամբ դուրս քշել համայնավարները Ղազախի շրջանէն եւ ամէն գնով լեզու գտնել թուրքերու հետ, վերջ տալու պատերազմին»[2]:

Նիստի մասնակիցներից Դրոն, Հ. Քաջազնունին, Ռ. Տեր-Մինասյանը պնդում էին հակառակը և բոլշևիկների դեմ կռիվը համարում աղետաբեր՝ մտածելով, որ կռվի դեպքում երկու ճակատ կստեղծվի, իսկ Հայաստանը չէր կարող միաժամանակ և՛ բոլշևիկների և՛ քեմալականների դեմ կռվել:

Ռ. Տեր-Մինասյանն իր ելույթում նշում է, որ "հայ զօրքը ի վիճակի չէ որեւէ պատերազմ վարելու», իսկ Դրոն հավելում է, որ «առհասարակ, հայ զօրքը չի կռուի ռուս զօրքի դէմ. հետեւաբար, կռուի ամէն կոչ ոչ այլ ինչ է, եթէ ոչ աններելի մի արկածախնդրութիւն»: Դրոյի ու Ռ. Տեր-Մինասյանի հետ համակարծիք էր նաև Ս. Վրացյանը[3]: Ինչ վերաբերվում է Հ. Քաջազնունուն, ապա վերջինս իր խոսքում շեշտում է, որ Հայաստանին մնում է մի ելք՝ ընդունել Բ. Լեգրանի վերջնագիրը և խաղաղ կերպով իշխանությունը փոխանցել բոլշևիկներին: Ստեղծված պայմաններում Հ. Քաջազնունին տրամաբանական էր համարում այն, որ "հայ բոլշեւիկները, հենուած ռուսական ոյժի վրայ, պիտի վարեն փաստօրէն ազգային քաղաքականութիւն»[4]:

Վիճաբանությունները շարունակվում են մինչև կես գիշեր, երբ Ս. Վրացյանին Ալեքսանդրապոլից ուղիղ հեռագրաթելի մոտ է կանչում Ալ. Խատիսյանը և հայտնում, որ քեմալականները ներկայացրել են հաշտության պայմաններ և վերջնագիր՝ այն ընդունելու կամ մերժելու համար տալով 48 ժամ[5]:

Անշուշտ, թուրքական այս վերջնագիրը հստակեցրեց նիստի մասնակիցների դիրքորոշումը, և նրանց մեծ մասը եկավ այն համոզման, որ

---

[1] Տե՛ս **Թորոսեան Ս.**, Հանդիպումներ վարչապետ Յ. Քաջազնունի ի հետ // "Հայրենիք», 1952,թիվ 7, հուլիս, էջ 7:

[2] **Վեհապետեան Թ.**, Նոր սերունդը՝ քավութեան նոխազ, հ. Ա, Պէյրութ, 1988, էջ 83:

[3] Տե՛ս "Հայրենիք», 1923, թիվ 1, էջ 71:

[4] "Հայրենիք», 1952, թիվ 7, հուլիս, էջ 7:

[5] Տե՛ս **Վրացեան Ս.**, Կեանքի ուղիներով, հ. Ե, էջ 195:

պետք է ընդունել Բ. Լեգրանի վերջնագիրը: “Կացութիւնը պարզ էր,– գրում է Հ. Տերտերյանը,– հայ ժողովրդի ֆիզիքական գոյութիւնը փրկելու համար, հակառակ մեր կամքին, ստիպուած էինք ժամանակաւորապէս հրաժարուել Հայաստանի անկախութիւնից»[1]: Ժողովի վերջում որոշվեց Դրոյին և Հ. Տերտերյանին հանձնարարել կառավարության և կուսակցության անունից բանակցել Բ. Լեգրանի հետ: Միաժամանակ նրանց է ներկայացվում այն հիմնական սկզբունքները, որոնց հիման վրա պետք է ընթանային բանակցությունները: Այդ պայմաններն էին՝ Հայաստանի անկախ սոցիալիստական խորհրդային հանրապետության ճանաչումը, Երևանի նահանգը, Կարսի շրջանի մի մասը, Զանգեզուրը, Ղազախի գավառի՝ օգոստոսի 10-ի համաձայնագրով նախատեսված հատվածը, Թիֆլիսի նահանգի այն մասը, որը Հայաստանին էր պատկանում մինչև 1920 թ. հայ-թուրքական պատերազմը, համարել Խորհրդային Հայաստանի մաս[2], քաղաքական կուսակցությունների անդամներին և բանակի հրամկազմին նախկինում կատարած գործերի համար պատասխանատվության չենթարկել, Հայհեղկոմը պետք է կազմվեր կոալիցիոն սկզբունքով՝ բոլշևիկներից և դաշնակցականներից[3]:

ՀՅԴ ֆրակցիայի վերջին նիստը

Դեկտեմբերի 1-ին Խորհրդային Ռուսաստանի լիազոր ներկայացուցիչ Բ. Լեգրանը վարչապետ Ս. Վրացյանին է հանձնում հետևյալ գրությունը. «Վկայակոչելով երեկ Հայաստանի ռազմական նախարար Դրոյի ներկայությամբ մեր խոսակցությունը, նկատի ունենալով ՌԿԿ ԿԿ ընդունած որոշումը՝ Խորհրդային Սոցիալիստական անկախ Հայաստանի Ռազմահեղափոխական ժամանակավոր կոմիտե ստեղծելու մասին, հաստատում եմ անհրաժեշտաբար պարզելու Հայաստանում խորհրդային իշխանություն ստեղծելու հարցի վերաբերյալ Հայաստանի ներկա կառավարության վերաբերմունքը: Իմ ստացած տեղեկությունների համաձայն Հայհեղկոմը մտել է Հայաստանի սահմանները»[4]: Նույն օրը երեկոյան, խորհրդարանի շենքում տեղի է ունենում Դաշնակցության ֆրակ-

---

[1] “Հայրենիք», 1954, թիվ 5, մայիս, էջ 10:

[2] Տե՛ս **Վրացեան Ս.**, նշվ. աշխ., էջ 197:

[3] Տե՛ս “Հայրենիք», 1923, թիվ 1, էջ 72:

[4] ՀԱԱ, ֆ. 200, g. 1, գ. 581, թ. 352:

ցիայի վերջին նիստը, ինչը բավական պատկերավոր է ներկայացնում խորհրդարանի անդամ Հ. Իրազեկը. "Չափազանց ծանր էր և ճնշող ժողովի պատկերը: Մեր բախտից՝ այդ երեկոյ էլեքտրականութիւնն էլ չէր գործում և նստել էինք մոմերի աղօտ լոյսի տակ: Ամենքը լուռ էին ու մտախոհ, կարծես ասելու բան չէին գտնում: Կառավարութեան և Դրօի կցկտուր զեկուցումներից միայն մէկ բան պարզ երևաց, որ դրութիւնը անյոյս է»[1]:

Ֆրակցիայի նիստում դրված էր մի հարց, թե ինչպես պետք է դուրս գալ ստեղծված իրավիճակից: Նախորդ օրվա վիճաբանությունները շարունակվում են: Նիստի մասնակիցների մեծ մասը կարծում էր, որ պետք է առանց դիմադրության ընդունել բոլշևիկներին և նրանց միջոցով երկրից վռնդել թուրքերին և այդ կերպ փրկել հայ ժողովրդի ֆիզիկական գոյությունը: Փոքրամասնությունն առաջարկում էր հակառակը՝ կռվել բոլշևիկների դեմ և թույլ չտալ, որ նրանք առանց դիմադրության գրավեն Հայաստանը: Ի վերջո հարցը դրվում է քվեարկության և 21 ձայնով ընդդեմ 7-ի և 2-ի ձեռնպահությամբ որոշվում է առանց դիմադրության իշխանությունը հանձնել բոլշևիկներին և երկիրը խորհրդայնացնել[2]: Հ. Քաջազնունին նշում է, որ իշխանությունը բոլշևիկներին հանձնելու որոշումն ընդունել է դաշնակցությունը, որը սակայն միաձայն չի եղել: "Միաձայն չէր այս որոշումը: Կային անհաշտներ, որոնք ոչ մի լաւ բան չէին սպասում բոլշեւիկներից, պահանջում էին ընդդիմադրութիւն ու կռիւ, նոյն իսկ ընդունելով պարտութեան անխուսափելիութիւնը: Փոքր էր սրանց թիւը: Երբ առաջարկը մերժուեց, ամենից հետեւողականները թողին երկիրն ու հեռացան»[3],– գրում է նա:

ՀՅԴ ֆրակցիայի վերջին նիստի հետ կապված Հ. Իրազեկը հետևյալն է գրում. "Դեկտեմբերի 1-ի ժողովից մենք ցրուեցինք խիստ ծանր տպաւորութեան տակ. կարծես վերադառնում էինք գերեզմանատնից մի շատ թանկագին կեանք թաղելուց հետո: Մենք մեր սեփական կամքով բոլշևիկներին զիջեցինք մեր ամենէն թանկագին գաղափարը՝ Անկախ

---

[1] **Իրազեկ Յ.**, Մեր պատմութեան ամենատխուր էջը // «Դրօշակ», 1930, թիվ 10, հոկտեմբեր, էջ 240:

[2] Տե՛ս նույն տեղում, էջ 241:

[3] **Քաջազնունի Հ.**, ՀՅ Դաշնակցությունը անելիք չունի այլևս, Երևան, 1994, էջ 45:

Հայաստանի իրավունքը»[1]: Փաստորեն, դեկտեմբերի 1-ի այս նիստի ժամանակ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է իշխանությունը խաղաղ կերպով փոխանցել բոլշևիկներին: Հաջորդ օրը վարչապետ Ս. Վրացյանի կաբինետը հրաժարվում է իշխանությունից և այն հանձնում Դրոյին, իսկ վերջինս երկիրը պետք է կառավարեր մինչև Հայհեղկոմի Երևան ժամանելը: Այդ մասին Ս. Վրացյանը հեռագրում է Վրաստանում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցիչ Տ. Բեկզադյանին[2]: Նույն օրը ժամը 12-ին Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչներ Դրոն, Հ. Տերտերյանը և ՌԽՖՍՀ լիազոր ներկայացուցիչ Բ. Լեգրանը Երևանում կնքում են ութ հոդվածից բաղկացած մի համաձայնագիր, որով Հայաստանը հայտարարվում էր անկախ սոցիալիստական Խորհրդային հանրապետություն: Այսպիսով, Հայաստանը խորհրդայնացվելով զրկվում է իր անկախությունից, փոխարենը պահպանում է իր տարածքների մի մասը: Երևանի համաձայնագիրն առաջին միջազգային փաստաթուղթն էր, որտեղ նշված էր հայկական մի շարք տարածքների՝ Խորհրդային Հայաստանին «անվիճելի կերպով» պատկանելու մասին[3]:

Երևանի հայ-ռուսական համաձայնագրի գնահատականը հայ պատմագրության մեջ

Խորհրդային Հայաստանի մաս կազմող վերոնշյալ տարածքները հիշատակված են Երևանի համաձայնագրի 3-րդ հոդվածում. “Ռուսաստանի Խորհրդային կառավարությունը ընդունում է, որ ՀԽՍՀ-ի հողերի մեջ անվիճելի կերպով մտնում են՝ Երևանի նահանգն իր բոլոր գավառներով, Կարսի նահանգի մի մասը, որ զինվորական տեսակետից կապահովի երկաթուղու տիրապետությունը Ջաջուռ կայարանից Արաքս կայարանը, Ելիզավետպոլի նահանգի Զանգեզուրի գավառը և Ղազախի գավառի մի մասը օգոստոսի 10-ի համաձայնության սահմաններում, և Թիֆլիսի նահանգի այն մասերը, որոնք Հայաստանի տիրապետությանտակ էին

---

1 **Իրազեկ Յ.**, նշվ. աշխ., էջ 241:

2 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 560[II], թ. 476:

3 Տե՛ս **Խաչատրյան Կ., Սուքիասյան Հ., Բաղալյան Գ.**, Հայկական տարածքների բռնակցումը Թուրքիային և Խորհրդային Ադրբեջանին 1920-1930-ական թվականներին, Երևան, 2020, էջ 31:

գտնվում մինչև 1920 թ. սեպտեմբերի 28-ը»[1]:

Հայ պատմագիտության մեջ տարբեր գնահատականների արժանացած Երևանի համաձայնագրի այս կետը չի իրագործվել: Խորհրդահայ նշանավոր պատմաբան Աշոտ Հովհաննիսյանը Երևանի հայ-ռուսական համաձայնագիրը համարում էր «արժեքից զուրկ մի գրություն»[2], իսկ Արտաշես Կարինյանն այն դիտում էր որպես ժամանակավոր քաղաքական համաձայնություն: «Այդ համաձայնությունը ժամանակավոր այն զենքերից մեկն էր, որոնց միջոցով դաշնակցականները ձգտում էին ամրանալ իրենց դիրքերում մինչև "քաղաքական սիտուացիայի» փոխվելը»[3],– գրում է նա: Դեկտեմբերի 2-ի հայ-ռուսական համաձայնագիրը հեղինակը համարում էր դաշնակցություն կուսակցության հուսահատական այն կետերից մեկը, որով վերջինս ձգտում էր նենգափոխել պատմությունը և կենդանության կանչել դաշնակցության քայքայվող շարքերը[4]:

Ընդհանրապես խորհրդահայ պատմագրության մեջ Երևանի հայ-ռուսական համաձայնագիրը չի դիտարկվել որպես օրինական իշխանության փոխանցման ակտ, այլ պարզապես քննադատվել է և տարբեր որակումներ ստացել: Այսպես, օրինակ՝ խորհրդահայ պատմաբան Ս. Ալիխանյանը Երևանի համաձայնագիրը որակել է որպես դաշնակցական կառավարության կապիտուլյացիա[5]: Հ. Էլչիբեկյանը այն համարել է Խորհրդային Ռուսաստանի և Խորհրդային Հայաստանի միջև կնքված ռազմա-քաղաքական համաձայնագիր[6]: Ս. Կարապետյանի կարծիքով Երևանի համաձայնագիրը երկու իրավազոր կառավարությունների միջև կնքված պայմանագիր էր, որի նպատակը Խորհրդային Հայաստանի և

---

1 Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества. Документы и комментарий. Составитель, ответственный редактор, автор предисловия и комментария доктор юридических наук,профессор Ю. Г. Барсегов, т. 2, ч. 1, Москва, 2003, с. 289.

2 Տե՛ս **Հովհաննիսյան Ա.**, "Համազգային կրիզիսը»: (Նոյեմբերյան հեղափոխության հինգերորդ տարեդարձի առթիվ), Յերևան, 1926, էջ 26:

3 **Կարինյան Ա.**, Դաշնակցությունըևիր "զինակիցները», Երևան, 1932, էջ 88:

4 Տե՛ս **Կարինյան Ա.**, Դաշնակցությունը փաստերի դեմ, Թիֆլիս, 1926, էջ 42:

5 Տե՛ս **Ալիխանյան Ս.**, Սովետական Ռուսաստանի դերը հայ ժողովրդի ազատագրման գործում (1917-1921թթ.), Երևան, 1964, էջ 203:

6 Տե՛ս **Эльчибекян А.**, Великая Октябрьская социалистическая революция и победа советской власти в Армении, Ереван, 1957, с. 191:

Խորհրդային Ռուսաստանի ռազմաքաղաքական և տնտեսական համագործակցությանը իրավական և դիվանագիտական բնույթ հաղորդելն էր[1]: Մեր կարծիքով Երևանի համաձայնագիրը ոչ այլ ինչ էր, քան իշխանափոխության փաստն ամրագրող փաստաթուղթ:

Ի տարբերություն խորհրդահայ պատմագրության՝ սփյուռքահայ պատմագրության մեջ գերիշխող էր այն տեսակետը, ըստ որի Հայաստանը խորհրդայնացել էր դեկտեմբերի 2-ի Երևանի համաձայնագրով՝ խաղաղ կերպով, փոխադարձ համաձայնությամբ և առանց որևէ հեղափոխության[2]: Հ. Տերտերյանը բացառիկ երևույթ էր համարում այն, որ դաշնակցությունը դեկտեմբերի 2-ին հոժարակամ իշխանությունը փոխանցեց մեկ այլ հակառակորդ ուժի՝ բոլշևիկներին: “Դեկտեմբերի 2-ի խորհուրդը կայանում է նրանում, որ ՀՅԴ-ն հայ ժողովրդի շահերը գերադասելով իր կուսակցական շահերից, ընդունում է նոր իշխանութիւնը՝ հայ ժողովրդին ծառայելու և օգտակար դառնալու մտահոգութեամբ: Սակայն, եկւոր իշխանութիւնը չըմբռնեց, աւելի շուտ չցանկացաւ ըմբռնել դեկտեմբեր 2-ի քաղաքական արժէքը»[3]:

Անդրադառնալով Երևանի համաձայնագրի հոդվածներին՝ Յ. Իրազեկը կարծում էր, որ դրանք “մեռած տառ» մնացին, իսկ եթե դրանցից մի երկուսն էլ իրագործվեցին, ապա բոլորովին հակառակ իմաստով: “Ցավալին այն է,– գրում է նա,– որ մեր մեջ կան մարդիկ, որոնք բոլոր նման դեպքերում միշտ էլ բոլշևիկյան գովքն են երգում և հանցանքը անպայման ուրիշների վրա գցում»[4]:

Ինչ վերաբերում է անկախության շրջանի պատմագրությանը, ապա այդ շրջանում հրատարակած աշխատություններից մեկում ակադեմիկոս Գ. Գալոյանը նշում է, որ Երևանի համաձայնագրի տեքստն առաջին անգամ հրատարակվել է Մոսկվայում 1928 թ., որտեղ «Երևանի նահանգը իր բոլոր գավառներով» Հայաստանին թողնելու արտահայտությունը համաձայնագրի 3-րդ հոդվածում կրճատված է: “Դա պատահական բաց-

---

1 Տե՛ս **Կարապետյան Ս.**, 1920 թ. հայ-թուրքական պատերազմը և Սովետական Ռուսաստանը, Երևան, 1965, էջ 42:

2 Տե՛ս **Վրացյան Ս.**, Հայաստանի Հանրապետություն, էջ 535, **Արծրունի Վ.**, Հայ-տաճկական պատերազմը. Հայ սպայութիւնը. Շատախ, Երեւան, 2002, էջ 337:

3 **Տէրտէրեան Հ.**, Ի՞նչ պիտի գիտնայ երիտասարդ դաշնակցականը, Թեհրան, 1955, էջ 91:

4 **Իրազեկ Յ.**, նշվ. աշխ., էջ 89:

թողում չէր,– գրում է հեղինակը,– Երևանի նահանգի մեջ մտնում էին նաև Նախիջևանն ու Սուրմալուն, որոնք 1921 թ. ռուս-թուրքական պայմանագրով օտարվել էին Հայաստանից»[1]:

Սա պարզապես վկայում է այն մասին, որ թղթի վրա Հայաստանին թողնված տարածքները դեռևս չէր նշանակում, որ բոլշևիկները դրանց ճակատագիրը վճռել են հոգուտ հայերի: Ըստ էության, Խորհրդային Ռուսաստանը որևէ գործնական քայլի չդիմեց Երևանի համաձայնագրի կետերից որևիցե մեկի իրականացման ուղղությամբ: Միայն մի քանի կետեր իրագործվեցին, բայց բոլորովին հակառակ իմաստով[2]:

Բոլշևիկները, մոռացության մատնելով իրենց մեղքով Հայաստանին պատճառած տարածքային կորուստները, դրա համար թիրախ էին ընտրել 1920 թ. դեկտեմբերի 2-ի լույս 3-ի գիշերը Հայաստանի Հանրապետության կառավարության և Թուրքիայի Ազգային մեծ ժողովի կառավարության միջև ստորագրված Ալեքսանդրապոլի պայմանագիրը և ամբողջ մեղքը բարդում էին Ալ. Խատիսյանի, Ս. Վրացյանի և Դրոյի վրա: Ամբողջ խորհրդահայ պատմագրությունը քարկոծում էր Ալեքսանդրապոլի պայմանագիրը և չհիմնավորված նշում, որ դրանով Հայաստանի Հանրապետության տարածքը կազմում էր 10.000 քառ. կմ: Խորհրդահայ պատմաբանները հավանաբար մոռացել էին, որ Երևանի հայ-ռուսական համաձայնագրով Հայաստանի Հանրապետության տարածքը պետք է կազմեր 43.000 քառ. կմ[3], իսկ որտե՞ղ մնացին այդ տարածքները 1921 թվականին:

Ակադեմիկոս Լ. Խուրշուդյանը Երևանի համաձայնագրի տարածքային հարցերին վերաբերող երրորդ հոդվածն իրատեսական չի համարում, գտնելով, որ այն մեկ նպատակ էր հետապնդում՝ համոզել Հայաստանի կառավարությանը առանց կռվի իշխանությունը հանձնել բոլշևիկներին: Հեղինակը նշում է, որ Մոսկվան Բ. Լեգրանին նման գրավիչ տարածքային զիջումներ անելու իրավասություններ չէր տվել, ուստի այդ տարածքային խոստումները կենտրոնի հետ համաձայնեցված չէին[4]: Ան-

---

[1] **Գալոյան Գ.**, Հայաստանը և մեծ տերությունները 1917-1923 թթ., Երևան, 1999, էջ 373:

[2] Տե՛ս **Իրազեկ Յ.**, նշվ. աշխ., էջ 89:

[3] Տե՛ս **Խաչատրյան Կ., Սուքիասյան Հ., Բադալյան Գ.**, նշվ. աշխ., էջ 18:

[4] Տե՛ս **Խուրշուդյան Լ.**, Հայաստանի բաժանումը 1920 թվականին, Երևան, 2002, էջ 307:

շուշտ, հարկ է համաձայնել Լ. Խուրշուդյանի այն տեսակետի հետ, որ նման պայմաններում Հայաստանին արված տարածքային խոստումների մասին Բ. Լեգրանի հաղորդումը չհանդիպեց Մոսկվայի դիմադրությանը: «Ի վերջո, թե՛ Լեգրանի կնքած համաձայնագիրը, թե՛ Բաքվի հռչակագիրը (խոսքը Նարիմանովի նոյեմբերի 30-ի հռչակագրի մասին է – *Ա. Ա.*) մարտավարական նշանակություն ունեին»[1]:

Կ. Խաչատրյանը նշում է, որ հայկական կողմի հետ բանակցություններում Բ. Լեգրանը երբեմն գործում էր սեփական նախաձեռնությամբ և դուրս էր գալիս իրեն տրված իրավասությունների շրջանակից[2]: Նա հենց սա է համարում պատճառներից մեկը, որ խորհրդային իշխանությունները հետագայում հետամուտ չեղան դեկտեմբերի 2-ի համաձայնագրով ստանձնած պարտավորությունների կատարմանը[3]: Այս տեսակետին է հակված նաև Ա. Հակոբյանը: Երևանի համաձայնագրով Հայաստանին տրվելիք տարածքային զիջումները նա համարում է Բ. Լեգրանի անձնական նախաձեռնությունը, որի նպատակը, ըստ հեղինակի, խոստումներ տալու միջոցով Հայաստանի խորհրդայնացումը դյուրին դարձնելն էր[4]:

Ա. Հակոբյանը համաձայնագրի երրորդ հոդվածով արձանագրված տարածքային պահանջը համարում է “հուսադրող», ելնելով այն հանգամանքից, որ նոյեմբերի 30-ին Ադրբեջանի հեղկոմի հռչակագրով Զանգեզուրը և Նախիջևանը համարվում էին Խորհրդային Հայաստանի անբաժանելի մաս, իսկ Լեռնային Ղարաբաղին տրվելու էր ինքնորոշման իրավունք: «Երևանի համաձայնագիրը կարծես գալիս էր վերահաստատելու Ադրհեղկոմի հռչակագրում ամրագրված Զանգեզուրը և Նախիջևանը Խորհրդային Հայաստանի անբաժան մաս ճանաչելու հայ ժողովրդի անօտարելի պահանջը, նաև ի հավելումն դրան՝ Լեռնային Ղարաբաղին ինքնորոշման իրավունք տալը: Սակայն հետագա դեպքերը ցույց տվեցին, որ թե՛ Ադրհեղկոմի հռչակագրում և թե՛ Երևանի համաձայնագրի 3-րդ հոդվածում Հայաստանի ու հայ ժողովրդի օգտին տեղ գտած տարած-

---

[1] Նույն տեղում, էջ 311:

[2] Տե՛ս **Խաչատրյան Կ.**, նշվ. աշխ., էջ 49, տե՛ս նաև՝ **Խաչատրյան Կ., Սուքիասյան Հ., Բադալյան Գ.**, նշվ. աշխ., էջ 9:

[3] Տե՛ս **Խաչատրյան Կ.**, նշվ. աշխ., էջ 49-50:

[4] Տե՛ս **Հակոբյան Ա.**, Խորհրդային Հայաստանը Մոսկվայի և Կարսի պայմանագրերում, Երևան, 2010, էջ 57:

քային նշագրումները ընդամենը հնարք էին Հայաստանի խորհրդայնացումը հեշտացնելու համար»[1],– գրում է Ա. Հակոբյանը:

Այսպիսով, ստացվում է, որ խորհրդայնացումով նույնպես Հայաստանի տարածքային-սահմանային խնդիրներն իրենց վերջնական լուծումը չստացան, այլ պարզապես Հայաստանը անորոշ պետական սահմաններով մուտք գործեց խորհրդային հասարակություն:

ՀՍԽՀ տարածքն ըստ Երևանի համաձայնագրի

Ըստ Երևանի համաձայնագրի 3-րդ հոդվածի՝ նորահռչակ Խորհրդային Հայաստանի մաս պետք է կազմեր Երևանի նահանգը, Զանգեզուրի գավառը, Կարսի մարզի արևելքը, Ղազախի գավառի հայկական հատվածը և Բորչալուի գավառի հարավը, որի արդյունքում Խորհրդային Հայաստանի տարածքը պետք է կազմեր ավելի քան 43.000 քառ. կմ: Սակայն այս համաձայնագրին վիճակված չէր կենսագործվելու: Նախ նշենք, որ Երևանի նահանգը սկսած XIX դարի 70-ական թվականներից կազմված էր յոթ գավառից (Երևան, Ալեքսանդրապոլ, Էջմիածն, Նոր Բայազետ, Սուրմալու, Շարուր-Դարալագյազ և Նախիջևան) և ընդհանուր առմամբ ուներ 26400 քառ. կմ տարածք[2]: Սակայն, հարկ է նշել, որ վերոնշյալ գավառներից Նախիջևանը դեռևս 1920 թ. օգոստոսի 10-ի Թիֆլիսի համաձայնագրով պետք է ժամանակավորապես ռազմակալվեր Խորհրդային Ռուսաստանի զորքերի կողմից: Երևանի համաձայնագրով Նախիջևանը, փաստորեն, պետք է տրվեր Հայաստանին, չնայած այն իրականում շարունակեց մնալ վիճելի տարածք այնքան ժամանակ, մինչև 1921 թ. մարտի 16-ին Մոսկվայում ստորագրված ռուս-թուրքական պայմանագրի 3-րդ հոդվածով վճռվեց վերջինիս ճակատագիրը: Ինչ վերաբերում է Ալեքսանդրապոլին, ապա այն 1920 թ. նոյեմբերի 7-ին գրավվել էր քեմալականների կողմից և ազատագրվեց թուրքական զորքերից միայն 1921 թ. ապրիլի 22-ին[3]:

Ելիզավետպոլի նահանգի Զանգեզուրի գավառը, որը զբաղեցնում էր շուրջ 7673,4 քառ. կմ տարածք, ներառում էր ներկայիս Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզը և Լեռնային Ղարաբաղի Քաշաթա-

---

[1] Նույն տեղում, էջ 54:

[2] Տե՛ս **Խաչատրյան Կ., Սուքիասյան Հ., Բադալյան Գ.**, նշվ. աշխ., էջ 35:

[3] Տե՛ս **Հակոբյան Ա.**, նշվ. աշխ., էջ 224:

ղի շրջանն ամբողջությամբ, Բերդաձորի ենթաշրջանը, ինչպես նաև Մեծ Քիրսի լեռնագագաթի հարավ-արևմտյան ստորոտում գտնվող Հադրութի շրջանի "Ղուզեյի գյուղերը»[1]: Փաստորեն, ստացվում է, որ Զանգեզուրը նույնպես չի ընդգրկվել Խորհրդային Հայաստանի կազմում, համաձայնագրի այս դրույթը ևս չի իրագործվել:

Նժդեհն ամիսներ շարունակ չէր ճանաչում և ընդունում Հայաստանում հաստատված խորհրդային իշխանությունը: Ինչ վերաբերում է Լեռնային Ղարաբաղի մի փոքր հատվածը Հայաստանին հատկացնելուն, ապա հարկ է նշել, որ սա ևս իրականությանը մոտ չէր, քանի որ Կարմիր բանակի զորամասերի Հայաստան մուտք գործելու առիթով Ադրբեջանի Հեղկոմը նոյեմբերի 30-ին արված իր ողջույնի հեռագրում ազդարարում էր, որ Զանգեզուրի ու Նախիջևանի գավառների տարածքները համարվում են Խորհրդային Հայաստանի անբաժան մասը, իսկ Լեռնային Ղարաբաղի աշխատավոր գյուղացիությանը տրվում էր ինքնորոշման լրիվ իրավունք[2]: Այս հռչակագրի ընդունման մասին Ադրբեջանի հեղկոմի նախագահ Ն. Նարիմանովի և արտգործժողկոմ Հուսեյնովի ստորագրություններով "Բոլորին, բոլորին, բոլորին» դիմումով Խորհրդային Ադրբեջանի անունից հայ ժողովրդին հայտնվում էր Ադրհեղկոմի նոյեմբերի 30-ի որոշման մասին, որտեղ Լեռնային Ղարաբաղին վերաբերող որոշումը տարբերվում էր հռչակագրից: «Ադրբեջանի բանվորա-գյուղացիական կառավարությունը, ստանալով ապստամբած գյուղացիների անունից Հայաստանը Սոցիալիստական Խորհրդային Հանրապետություն հայտարարելու ուրախալի լուրը, ողջունում է եղբայրական ժողովրդի հաղթանակը: Այսօրվանից Հայաստանի և Ադրբեջանի միջև եղած սահմանավեճերը հայտարարվում են վերացած: Լեռնային Ղարաբաղը, Զանգեզուրը և Նախիջևանը համարվում են ՀՍԽՀ մասեր»[3], նշված է դիմումում: Այս որոշման մասին Ս. Օրջոնիկիձեն Լենինին և Ստալինին հայտնում է դեկտեմբերի 2-ին, այն է՝ Երևանի համաձայնագրի ստորագրման օրը, որով Լեռնային Ղարաբաղն ամբողջությամբ Հայաստանի մաս չէր կազմելու: Սա նշանակում է, որ այդ որոշումը ձևական բնույթ է կրել՝ հետապնդելով Հայաստանի խորհրդայնացումը դյուրացնելու նպատակ:

---

[1] Տե՛ս **Խաչատրյան Կ., Սուքիասյան Հ., Բաղալյան Գ.**, նշվ. աշխ., էջ 35:

[2] Տե՛ս Нагорный Карабах в 1918-1923 гг., с. 600-601:

[3] Նույն տեղում, էջ 601-602:

Կ. Խաչատրյանը, Հ. Սուքիասյանն ու Գ. Բադալյանը Երևանի համաձայնագրի՝ “Կարսի մարզի մի մասը, որը զինվորական տեսակետից կապահովի երկաթուղու անվտանգությունը՝ Ջաջուռ կայարանից մինչև Արաքս կայարանը» սահմանումը, իրավացիորեն համարում են անորոշ ձևակերպում: Նրանք առկա քարտեզագրական նյութի հիման վրա փորձել են պարզել Կարսի մարզի այն տարածքը, որը տեսականորեն կարող էր անցնել Խորհրդային Հայաստանին Երևանի համաձայնագրով: Ըստ նրանց հաշվարկների՝ ՀՍԽՀ համար նախատեսվող շրջանում պետք է ընդգրկվեին նախկին Կարսի մարզի համանուն շրջանի, Աղբաբայի, Զարիշատի և Շորագյալի (Արևմտյան Շիրակ) և Կաղզվանի շրջանի Նախիջևանի տեղամասերը: Ահա հենց այս տարածքների ընդգրկումը ՀՍԽՀ-ի կազմ, կունենար այն ռազմավարական կարևորությունը, որը հնարավոր կդարձներ Հայաստանի հյուսիսային շրջաններն Արարատյան դաշտի ու Երևանի հետ կապող երկաթուղու անվտանգ շահագործումը վերջինիս կողմից: Ընդհանուր առմամբ, Կարսի մարզից ՀՍԽՀ-ին անցնող տարածքը կազմելու էր շուրջ 4417 քառ. կմ[1]: Սակայն տվյալ պահին Կարսը ռազմակալված էր թուրքական ուժերի կողմից, որոնք այն իրենց վերահսկողության տակ էին վերցրել դեռևս 1920 թ. հոկտեմբերի 30-ին:

Ինչ վերաբերում է Ղազախի գավառին, ապա հարկ է նշել, որ նախկին Ելիզավետպոլի նահանգի կազմում գտնվող շուրջ 5800 քառ. կմ տարածք ունեցող այդ գավառից 3260 քառ. կմ տարածքը 1920 թ. դրությամբ Հայաստանի իրավասության տակ է գտնվել: Ազգագրական առումով այդ գավառը կազմված էր երկու՝ մուսուլմանական և հայկական մասերից: Վերջինս կազմում էր գավառի մեծ մասը և ընդգրկում հիմնականում ներկայիս ՀՀ Տավուշի մարզի գրեթե ամբողջ տարածքը, ինչպես նաև ՀՀ Գեղարքունիքի մարզի Ճամբարակի տարածաշրջանի Աղստև գետի Գետիկ վտակի հովտում ընկած հյուսիսային բնակավայրերն ու Արծվաշեն ավանն իր շրջակայքով: Ի դեպ, ՀՀ Տավուշի մարզի Նոյեմբերյանի ու Իջևանի տարածաշրջանների միջև սեպի պես խրված Ներքին Աքսիփարա (Ոսկեպար) բնակավայրը, ինչպես նաև նրա հարևան՝ Բաղանիս-Հայրում, Ղուշչի-Հայրում, Մազամլու, Հայրըմլու գյուղերը նույնպես 1918-1920 թթ. գտնվել են Հայաստանի Հանրապետության կազ-

[1] Տե՛ս **Խաչատրյան Կ., Սուքիասյան Հ., Բադալյան Գ.**, նշվ. աշխ., էջ 37:

մում[1]: Այս բնակավայրերը թե՛ այն ժամանակ և թե՛ այսօր ունեցել են և ունեն կարևորագույն ռազմավարական նշանակություն մեր պետության համար:

Համաձայնագրի՝ "Թիֆլիսի նահանգի այն մասերը, որոնք Հայաստանի տիրապետության տակ էին գտնվում մինչև 1920 թ. սեպտեմբերի 28-ը», ձևակերպման մեջ, անշուշտ, պետք է հասկանալ նախկին Բորչալուի գավառի այն հատվածը, որը տարածվում էր Ձորագետից հարավ՝ մինչև նախկին Երևանի նահանգի հյուսիսային սահմանը: Այս հատվածում գտնվում էին 11 գյուղական հասարակություններ, որոնցից ինը ամբողջությամբ անցնելու էին ՀՍԽՀ-ին, իսկ երկուսը՝ հատվածաբար: Ըստ այս համաձայնագրի՝ ՀՍԽՀ-ի կազմում ընդգրկվելու էին ներկայիս ՀՀ Լոռու մարզի Ալավերդու և Ստեփանավանի տարածաշրջանների հարավային, Վանաձորի տարածաշրջանի հյուսիսային և Տաշիրի տարածաշրջանի հարավ-արևմտյան հատվածները՝ կազմելով շուրջ 1060 քառ. կմ տարածք[2]: Սակայն հարկ է նշել, որ 1920 թ. աշնանը բռնկված թուրք-հայկական պատերազմի ժամանակ, երբ առկա էր քեմալական բանակի՝ Լոռի ներխուժելու վտանգը, Վրաստանի կառավարության առաջարկով նոյեմբերի 13-ին Թիֆլիսում ստորագրվում է հայ-վրացական համաձայնագիր, ըստ որի՝ Լոռու չեզոք գոտին ժամանակավորապես պետք է անցներ վրացական զորքերի վերահսկողության տակ[3]: Այս վիճակը պահպանվեց մինչև 1921 թ. փետրվարի կեսերը:

Չնայած Հայաստանի խորհրդայնացումից հետո թուրքական զորքերի Լոռի ներխուժելու վտանգը վերացել էր, սակայն Վրաստանի կառավարությունը ոչ միայն պատրաստակամություն չէր ցուցաբերում զորքերը դուրս բերել Չեզոք գոտուց, այլև ձգտում էր այն ընդգրկել իր պետության տարածքում: Սակայն դա նրան չհաջողվեց, քանի որ խորհրդային ուժերի միջամտությամբ հաջողվեց Լոռին ազատագրել վրացական ուժերից: Ի դեպ, Լոռվա ազատագրումը հանդիսացավ նորաստեղծ Խորհրդային Հայաստանի տարածքային առաջին լուրջ ձեռքբերումը:

---

1 Տե՛ս նույն տեղում, էջ 40-41:

2 Տե՛ս նույն տեղում, էջ 42:

3 Տե՛ս **Սարդարյան Կ.**, Հայ-վրացական հարաբերությունները 1918-1921 թթ., Երևան, 2002, էջ 182-183:

Եզրակացություն

Այսպիսով, Երևանի համաձայնագրով նախատեսված ոչ մի տարածք փաստացի խորհրդայնացված Հայաստանի մաս չկազմեց, որովհետև այդ տարածքները ռազմակալված էին թուրքերի կողմից: Բացի այդ, Խորհրդային Ռուսաստանը գործնականում ոչ մի քայլի չդիմեց այդ համաձայնագրով նախատեսված տարածքային-սահմանային խնդիրները կենսագործելու ուղղությամբ: Թերևս հարկ է սա համարել գլխավոր պատճառը, որ այդ համաձայնագիրը մնաց թղթի վրա, փոխարենը խորհրդային իշխանությունը Հայաստանի տարածքային կորուստների ամբողջ մեղքը բարդում էր Ալեքսանդրապոլի պայմանագրի վրա: Սակայն չպետք է մոռանալ նաև հայ բոլշևիկների ունեցած "ներդրումը» Երևանի համաձայնագրի չիրագործման հարցում: Չէ՞ որ վերջիններս պահանջում էին չեղարկել այդ համաձայնագիրը, քանի որ այն ստորագրել էր դաշնակցական Դրոն: Հայհեղկոմի այս դիրքորոշումը կարելի է բացատրել նրանով, որ բոլշևիկները կարծում էին, թե երկրի խորհրդայնացումը հաջողվել է իրենց շնորհիվ, ուստի չէին ցանկանում իշխանությունը կիսել որևէ երկրորդ ուժի հետ:

Բանալի բառեր *– Հայաստանի Հանրապետություն, Հայաստանի խորհրդայնացում, Խորհրդային Ռուսաստան, Ս. Վրացյան, Բ. Լեգրան, Դրո, Հայհեղկոմ, Երևանի համաձայնագիր, ՀՅԴ, բոլշևիկ, պատմագրություն, տարածքային խնդիր*

УПАДОК РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ И ВОПРОС О ЕЕ ТЕРРИТОРИЯХ ПО АРМЯНО-РОССИЙСКОМУ ЕРЕВАНСКОМУ СОГЛАШЕНИЮ

Ара Азатян

Ключевые слова *– Республика Армения, советизация Армении, Советская Россия, С. Врацян, Б. Легран, Дро, Армянским революционным комитетом, Ереванское соглашение, АРФД, большевик, историография, территориальная проблема.*

В статье представлен упадок Первой Республики Армения и территориальные проблемы Армении согласно армяно-российскому договору, подписанному в Ереване. В 1920 году разразившаяся в конце сентября турецко-армянская война ускорила разрушение Республики Армения. Целью Советской России было

заставить Армению советизироваться посредством турецкого нападения. Поэтому в 1920 г. ноябре в повестку дня Советской России вошел вопрос о насильственной советизации Армении, а 2 декабря того же года армяно-российским договором, подписанным в Ереване, Армения была объявлена независимой Советской Социалистической Республикой. В этом соглашении упоминалось, что ряд армянских территорий войдет в состав Советской Армении, но ни одна из территорий так и не вошла в состав Советской Армении.

THE DECLINE OF THE REPUBLIC OF ARMENIA AND THE ISSUE OF ITS TERRITORIES ACCORDING TO THE YEREVAN ARMENIAN-RUSSIAN AGREEMENT

Ara Azatyan

Key words *– Republic of Armenia, Sovietization of Armenia, Soviet Russia, S. Vratsyan, B. Legran, Dro, Armenian Revolutionary Committee, Yerevan Agreement, ARF, Bolshevik, historiography, territorial problem.*

The article presents the decline of the First Republic of Armenia and the territorial problems of Armenia according to the Armenian-Russian treaty signed in Yerevan. In 1920 the Turkish-Armenian war that broke out at the end of September accelerated the destruction of the Republic of Armenia. Soviet Russia's goal was to force Armenia to Sovietize through the Turkish attack. Therefore, in 1920 in November, the issue of forced Sovietization of Armenia entered the agenda of Soviet Russia, and on December 2 of the same year, Armenia was declared an independent Soviet Socialist Republic by the Armenian-Russian agreement signed in Yerevan. In that agreement, it was mentioned that a number of Armenian territories would become part of Soviet Armenia, but none of the territories never became part of Soviet Armenia.

Արա Ազատյան, *ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի հայոց պատմության և հասարակագիտության ամբիոնի ասիստենտ, պատմական գիտությունների թեկնածու*

Ara Azatyan, *Ассистент кафедры истории армянского народа и социальных наук Иджеванского филиала ЕГУ, кандидат исторических наук*

Ara Azatyan, *Assistant at the Chair of Armenian History and Social Sciences of YSU Ijevan Branch, PhD in History*